

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՅԻԱ» ՀԱՍՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. նոյեմբերի 28-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերդյան	Կոմիտեի անդամ
Վահան Բերակչյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 6-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավագոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Հաշվի առնելով ենթադրյալ կարգապահական խախտման գործով Կոմիտեի անդամ Բաբկեն Ղալոյանի՝ այլ հանգամանքներով ներգրավվածությունը՝ վերջինս, ղեկավարվելով Կանոնակարգի 10.02 կետով, հայտնեց ինքնաբացարկ և չմասնակցեց օրակարգի 1-ին և 4-րդ հարցերի քննարկմանը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. 24.11.2022թ-ի «Շիրակ»-«Վան» (ԳԽ-007) խաղի ժամանակահատվածում մարզադաշտում խաղի հաշիվը ցույց տվող էլեկտրական ցուցատախտակի չաշխատելու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ» ՖԱ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով :

2. 26.11.2022թ-ի «Փյունիկ»-«Նոա» (ԳԽ-009) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած կարգապահական խախտումների վերաբերյալ. 1) Խաղի ավարտից հետո «Փյունիկ» թիմի երկրպագուների կողմից ձայնային պայթուցիկ կիրառելը, 2) «Նոա» թիմի երկրպագուների կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ թույլ տալը:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

2) Հաստատված համարել «Նոա» և «Փյունիկ» թիմերի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 23-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով և «Փյունի ՖԱ» ՀԿ նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

3. 26. 11. 2022թ-ի «Արարատ-Արմենիա»-«Ուրարտու» (ԳԽ-010) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած կարգապահական խախտումների վերաբերյալ. 1) «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ թույլ տալը, 2) «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Մախլսոն Լիմա Դուարտե Լոպեսի (33477) կողմից մարզադաշտում գտնվող գույքին վնաս հասցնելը, 3) Խաղի վերջնամասում «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից մարզադաշտում գտնվող գույքին վնաս հասցնելը և խաղադաշտ իրեր նետելը, 4) Խաղից անմիջապես հետո կազմակերպված մամուլի ասուլիսին «Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզչի չմասնակցելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի և «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Մախլսոն Լիմա Դուարտե Լոպեսի (33477) կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և

- 1) հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով,
- 2) հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ մրցումների անցկացման կանոնակարգի 5.02 կետի «գ» ենթակետը և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով,
- 3) հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ մրցումների անցկացման կանոնակարգի 5.02 կետի «գ» ենթակետը և Կանոնակարգի 28.03-րդ և 40-րդ հոդվածի 22-րդ և 80-րդ կետերը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով,
- 4) հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 53-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. 25.11.2022թ-ի «Ուրարտու-2»-«Արարատ-2» (ԱԽ-101) խաղի հայտացուցակում «Արարատ-2» թիմի փոխարինող ֆուտբոլիստի՝ հիմնական կազմում խաղին մասնակցելու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Ֆուտբոլային ակումբ Արարատ» Հ/Չ ՓԲԸ նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. 27.11.2022թ-ի «Գանձասար-Երևան-06»-«Միկա-07» (17A-035) խաղի ժամանակահատվածում «Միկա-07» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Էդուարդի Հայրապետյանի (37388) կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Միկա-07» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Էդուարդի Հայրապետյանի (37388) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 29-րդ կետը՝ Սուրեն Էդուարդի Հայրապետյանին (37388) որակազրկել մինչև 2023 թվականի ապրիլի 1-ը ներառյալ և «Սպորտային ակումբ Միկա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

6. 27.11.2022թ-ի «Հայասա»-«Լեռնային Արցախ-աղջիկներ» (ԿԲԽ-014) խաղի ժամանակահատվածում «Հայասա» թիմի ֆուտբոլիստ Մարի Էսիֆուի (41457) կողմից

զվխավոր մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Հայասա» թիմի ֆուտբոլիստ Մարի Էսիֆուի (41457) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 29-րդ կետը՝ «Հայասա» թիմի ֆուտբոլիստ Մարի Էսիֆուին (41457) որակազրկել 2 խաղով և «Հայասա ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

7. 27.11.2022թ-ի «Էկովիլ ֆզ»-«Թիմ ՖԱՖ» (ՖԶԲԽ-025) խաղի ժամանակահատվածում «Էկովիլ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Արա Աշոտի Հովսեփյանի (36780) կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Էկովիլ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Արա Աշոտի Հովսեփյանի (36780) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 49-րդ հոդվածի 19-րդ կետը՝ «Էկովիլ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Արա Աշոտի Հովսեփյանին (36780) որակազրկել 2 խաղով և «Էկովիլ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

8. 22.11.2022թ-ի «Փյունիկ-Դարակերտ-11»-«Վեդի-12» (12Գ-055) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած կարգապահական խախտումների վերաբերյալ. 1) «Փյունիկ-Դարակերտ-11» թիմի կողմից պարտադիր փոխարինվող երկու ֆուտբոլիստների սահմանված խաղային ժամանակահատված չհատկացնելը, 2) նախախաղային խորհրդակցությանը թիմերի սահմանված անձանց չմասնակցելը, 3) «Վեդի-12» թիմի երկրպագուների կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալը:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

- 1) Հաստատված համարել «Փյունիկ-Դարակերտ-11» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 32-րդ կետը՝ «Փյունի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:
- 2) Հաստատված համարել «Փյունիկ-Դարակերտ-11» թիմի և «Վեդի-12» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ «Փյունի ՖԱ» ՀԿ նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և Վեդի մ/դ նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
- 3) Հաստատված համարել «Վեդի-12» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 23-րդ կետը՝ Վեդի

մ/դ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի
չափով: